Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
օգոստոսի 18-ի N 847 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Հ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԿԱՑԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ

1. Կացարանն զբաղեցրած անձի կամ ընտանիքի (այսուհետ՝ բնակիչ) և «Հանգրվան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) միջև բնակչի զբաղեցրած կացարանի վարձակալության պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) կնքվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա կամ N 2 հավելվածի 42-րդ կետով նախատեսված ժամկետը լրանալուց հետո:

2. Պայմանագիրը բնակչի հետ կնքվում է կազմակերպության առաջարկության (այսուհետ՝ առաջարկություն) հիման վրա՝ կամավորության սկզբունքով՝ բնակչի համաձայնությամբ:

3. Կազմակերպությունը բնակչին առաջարկությունը ներկայացնում է սույն հավելվածի 1-ին կետով սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 45 օր առաջ:

4. Կազմակերպությունն առաջարկությունը և պայմանագրի տեքստը ներկայացնում է պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջն ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից՝ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

5. Պայմանագիրը կնքվում է, եթե բնակիչն այն կնքելու մասին գրավոր համաձայնությունը ներկայացնում է կազմակերպություն՝ կազմակերպության առաջակությունն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

6. Բնակիչը սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում կարող է կազմակերպություն ներկայացնել իր առարկությունները կամ անհամաձայնությունը պայմանագրի դրույթների վերաբերյալ, որոնք ընդունվում կամ լուծվում են կազմակերպության լիազոր ներկայացուցչի և բնակչի բանակցությունների միջոցով:

7. Պայմանագրում, ի թիվս այլ տեղեկությունների, նախատեսել նաև՝

1) կողմերի վավերապայմանները, այդ թվում՝ կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, կազմակերպության անունից պայմանագիրը կնքող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

2) բնակչի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, կացարանի հասցեն.

3) պայմանագրի համաձայն վարձակալության ժամկետը, վարձավճարի չափը, վճարման կարգը (այդ թվում՝ կացարանի վերանորոգումը կամ այլ աշխատանքներ).

4) կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

5) այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք վերաբերում են վարձակալության առանձնահատկություններին՝ վարձավճարի չափի արտոնությանը.

6) պայմանագիրը փոփոխելու և լուծելու հիմքերը.

7) որ պայմանագրից բխող՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վճարումներն իրականացվում են վարձակալի միջոցների հաշվին.

8) որ պայմանագրի ժամկետը, պայմանագրով սահմանված վարձակալության վարձավճարի չափը և վճարման կարգը՝

ա. վերանայվում են յուրաքանչյուր հաջորդ տարի՝ պայմանագրի կնքման օրը.

բ. փոխվելու դեպքում՝ պայմանագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով:

8. Պայմանագրով վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի չափը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով հաստատված կարգով:

9. Պայմանագրով վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի չափի արտոնությունները սահմանվում են ստորև թվարկված դեպքերում՝ համապատասխան չափով՝

1) պայմանագրի կամ լրացուցիչ համաձայնագրի կնքման ամսվա դրությամբ ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքին՝ սույն հավելվածի 8-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված վարձավճարի 50 տոկոսի չափով.

2) պայմանագրի կամ լրացուցիչ համաձայնագրի կնքման ամսվա դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող, սակայն ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք չունեցող ընտանիքներին՝ սույն հավելվածի 8-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված վարձավճարի 25 տոկոսի չափով:

10. Սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված համաձայնության բացակայության դեպքում կացարանն ազատվում է նախկինում կնքված պայմանագրի ժամկետը լրանալու հաջորդ օրը:

11. Կազմակերպությունը՝

1) վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրինմանն անցած միջոցներն ուղղում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը.

2) գույքի վարձակալության տրամադրման վերաբերյալ հաշվետվություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության սահմանած՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվության օրինակելի ձևին համապատասխան:

12. Սույն հավելվածի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով կացարանում տեղավորված՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքների) վրա:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ